



«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի «Պատանի ինագետ» դպրոցը հրավիրում է միջին և բարձր դասարանների դպրոցականներին՝ մասնակցելու դպրոցի 2017թ. գարնանային դասընթացին, որը կմեկնարկի ս.թ. ապրիլի 20-ից: Դասընթացը բաղկացած է տեսական և գործնական պարապմունքներից: Տեսական պարապմունքների տևողությունը 2 շաբաթ է՝ շաբաթական 3 դաս պարբերականությամբ: Գործնական պեղումները՝ 2 շաբաթ տևողությամբ, կընթանան թանգարանի տարածքում գտնվող ուսումնական պեղավայրում:

Դասընթացը ներառում է ինագետի մասնագիտության և հնագիտական պեղումների նախնական հասկացությունների ու մեթոդների վերաբերյալ գիտելիքներ և նպատակ ունի աջակցել հնագիտությամբ հետաքրքրվող երիտասարդներին մասնագիտության ընտրության հարցում, ինչպես նաև հնագիտական գիտելիքների տարածմամբ նպաստել հնագիտական ժառանգության պահպանությանը:

Դիմումներն ընդունվում են մինչև 2017թ. ապրիլի 19-ը :

Դիմումի ձևաչափը տրամադրվում է արգելոց-թանգարանի Հասարակայնության հետ կապերի և հանրահոշակման բաժնում /հասցեն՝ 0020, ք. Երևան, Էրեբունի փող. 38, հեռ.՝ 43-89-53/: